ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 13.03.2018թ. ԹԻՎ 213-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ 26 մարտի 2018
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ
Արմեն Բարսեղյան Էներգամատակարարման ծառայության պետ
Հանձնաժողովի բացող անդամներ
Սուսաննա Ծատուրյան Էներգամատակարարման ծառայության ինժեներ
Բարսեղ Գևորգյան Նավիգացիայի ծառայության հեռավոր օբյեկտների կենտրոնի ղեկավար
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Սերժիկ Սարիբեկյան Էներգամատակարարման ծառայության ինժեներ
Վարդան Սարգսյան Էներգամատակարարման ծառայության էլ. մոնտյոր
Հանձնաժողովի քարտուղար
Ա. Կարապետյան քարտուղար

ՕՐԱԿԱՐԳ

1. *ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-26/18* ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը՝

1. <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ
2. <<Էներգովեստ>> ՍՊԸ
3. <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ
4. <<Դավիթ Էներջի>> ՍՊԸ
5. <<Առսարքտեխ>> ՍՊԸ
6. <<Ռեդինետ>> ՓԲԸ
7. <<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ

Հանձնաժողովի նախագահ Ա. Բարսեղյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Հրապարակվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները:

ՀՀ դրամ

Չափ.հ/հ	Անվանում	<<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ	<<Էներգովեստառ>> ՍՊԸ	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ	<<Դավիթ Էներջի>> ՍՊԸ	<<Առսարքտեխ>> ՍՊԸ	<<Ռեդինետ>> ՓԲԸ	<<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ	Նախահ. գին
1	ՈՒԺային տրանսֆորմատոր SUL 100կվա-6000վոլտ	3588000	4380000	6600000	4080000	4200000	4368000	4923000	5 000 000
2	ՈՒԺային տրանսֆորմատոր SUL 100կվա-10000վոլտ	7176000	9600000	13200000	8160000	8400000	8736000	9846000	10 000 000

Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ հայտում ներառված փաստաթղթերը <<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ կողմից հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 7.19 կետի (Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են **էլեկտրոնային թվային ստորագրությամբ**):

Հանձնաժողովը արձանագրեց, որ բացառությամբ <<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ-ի, վերոնշյալ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Հանձնաժողովը որոշեց

1. Սույն ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ-ին: 1-ին և 2-րդ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Դավիթ Էներջի>> ՍՊԸ-ին, 3-րդ տեղ՝ <<Առսարքտեխ>> ՍՊԸ-ին:
2. Մերժել <<Բայազ Էներգոշին>> ՍՊԸ հայտը:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ-ին առաջարկել ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 06.04.2018թ. ժամը 12.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Արմեն Բարսեղյան		**Հանձնաժողովի նախագահ**
Սուսաննա Ծատուրյան		**Հանձնաժողովի անդամ**
Բարսեղ Գևորգյան		**Հանձնաժողովի անդամ**
Սերժիկ Սարիբեկյան		**Հանձնաժողովի անդամ**
Վարդան Սարգսյան		**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան		**Հանձնաժողովի քարտուղար**